2012 թվականի հունվար-փետրվար ամիսներին ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը [1]

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի եկամուտները հունվար-փետրվար ամիսներին կազմել են 119.3 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 115.5 մլրդ դրամ, որոնք համապատասխանաբար 65%-ով և 54.8%-ով ապահովել են ՀՀ կառավարության առաջին եռամսյակի ծրագրի կատարումը: Հարկ է նշել, որ չնայած բյուջետային ծախսերի համեմատաբար ցածր կատարողականին՝ ապահովվել է պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը: «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Մասնավորապես՝ արտաբյուջետային եկամուտները կազմել են 2.4 մլրդ դրամ կամ առաջին եռամսյակում նախատեսված մուտքերի 87%-ը, իսկ ծախսերը՝ 1.2 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 43.6%-ը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 13.1%-ով, ծախսերի գծով՝ 12.1%-ով:

<u>ՀՀ պետական բյուջեի եկամուտները</u>

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 4.3%-ով կամ 4.9 մլրդ դրամով, որը հիմնականում ապահովվել է հարկային եկամուտների աճի հաշվին:

Պետական բյուջեի եկամուտների ավելի քան 94.7%-ը ձևավորվել է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 5.1%-ը՝ այլ եկամուտների,0.2%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին:

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

2012 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 113.1 մլրդ դրամ հարկային եկամուտներ, պետական տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ, որոնք կազմել են եռամսյակային ծրագրի 63.9%-ը: 2011 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 4.5%-ով կամ 4.9 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է եկամտահարկի, ավելացված արժեքի հարկի, շահութահարկի, պարտադիր սոցիալական ապահովության վճարների և բնապահպանական ու բնօգտագործման վճարների աճով: Նշենք, որ նախորդ տարվա հունվար-փետրվար ամիսների համեմատ աճ է արձանագրվել գրեթե բոլոր հարկատեսակների գծով, բացառությամբ մաքսատուրքի, հաստատագրված վճարների և այլ հարկերի:

2012 թվականի հունվար-փետրվար ամիսներին պետական բյուջեի հարկային եկամուտներն ու տուրքերը կազմել են 92.9 մլրդ դրամ, որի 48.8%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին: Այն կազմել է 45.3 մլրդ դրամ և 3.5%-ով կամ 1.5 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից շուրջ 21.2 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 24.1 մլրդ դրամը՝ ներքին շրջանառությունից: Հարկ է նշել, որ ԱԱՀ-ի մուտքերի աճն ապահովվել է ներքին շրջանառության հաշվին, որից ստացված մուտքերն ավելացել են 23.3%-ով, մինչդեռ ներմուծման գծով մուտքերը նվազել են 12.5%-ով:

Պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 8%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով 7.4 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 3.1 մլրդ դրամ, հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 4.4 մլրդ դրամ: Ակցիզային հարկի գծով նույնպես արձանագրվել են նույն միտումները, ինչ որ ԱԱՀ-ի գծով. տեղական արտադրության ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացված մուտքերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 15%-ով, իսկ ներմուծվող ապրանքների գծով մուտքերը՝ նվազել 6.3%-ով. արդյունքում ակցիզային հարկի ընդհանուր մուտքերն աճել են 5.1%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների 13.4%-ը ձևավորվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 12.4 մլրդ դրամ: Նախորդ տարվա

հունվար-փետրվար ամիսների համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 10.4%-ով կամ 1.2 մլրդ դրամով:

2012 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 13.2 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 14.3%-ը և 15.4%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են 3.5 մլրդ դրամ կամ հարկերի և տուրքերի 3.8%-ը և 7.7%-ով զիջել 2011 թվականի համապատասխան ցուցանիշը:

2012 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել 3.2 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով առաջին եռամսյակի ծրագրի 68.3%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն աճել են 19.2%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում գործունեության առանձին տեսակներից գանձվել են 3.2 մլրդ դրամ հաստատագրված վճարներ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 3.5%-ը: Նշված մուտքերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 8.1%-ով:

2012 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 2.8 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ՝ կազմելով հարկերի և տուրքերի 3.1%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 60.2%-ով՝ հիմնականում պայմանավորված «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ, որի համաձայն արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար սահմանվել է ռոյալթի, որի գծով հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 761.6 մլն դրամ: Նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը պայմանավորված է նաև օգտակար հանածոների արդյունահանման համար գանձվող վճարների ավելացմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 1.7 մլրդ դրամի այլ հարկեր՝ կազմելով հարկերի և տուրքերի 1.8%-ը: Մասնավորապես՝ 1 մլրդ դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 164 մլն դրամ՝ ճանապարհային վճարները, 5.1 մլն դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման

թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) վճարները, 12.2 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 72.2 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 304 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, 21.3 մլն դրամ՝ արտոնագրային վճարները և 90.3 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշը նվազել է 54.7%-ով կամ 2.1 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարների նվազմամբ:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով 2012 թվականի հունվար-փետրվար ամիսների եկամուտները կազմել են ավելի քան 20.1 մլրդ դրամ՝ 5.6%-ով կամ 1.1 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

2012 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում պետական հիմնարկների արտաբյուջետային ծրագրերի շրջանակներում պետական բյուջե են մուտքագրվել 199 մլն դրամի դրամաշնորհներ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 6.1 մլրդ դրամ՝ 91.8%-ով ապահովելով առաջին եռամսյակի ծրագրային ցուցանիշը: Նշված գումարից շուրջ 2.2 մլրդ դրամը կազմել են ՀՀ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները: Ծրագրի համեմատաբար բարձր կատարողականը հիմնականում ապահովվել է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի և ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարների մուտքերի հաշվին, որոնք գերազանցել են եռամսյակային ծրագրային ցուցանիշները համապատասխանաբար 66.6 տոկոսով, 69.2 և 106.7 տոկոսով: 2011 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտները նվազել են 1.9%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների և ՀՀ կառավարությանն

առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի նվազմամբ:

ՀՀ պետական բյուջեի ծախսերը

2012 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում կատարված պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 5.5%-ով կամ 6 մլրդ դրամով: Ընդ որում, աճ է արձանագրվել ընթացիկ ծախսերի՝ հիմնականում նպաստների, դրամաշնորհների և կենսաթոշակների գծով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով գրանցվել է 61.3%-ով անկում:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 112.7 մլրդ դրամ՝ 56.2%-ով ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 10.2%-ով կամ 10.4 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 9.4 մլրդ դրամ տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը, որը նախորդ տարվա հունվար-փետրվարի ցուցանիշը զիջել է 0.9%-ով: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից օգտագործվել է 17.6 մլրդ դրամ, որը կազմել է եռամսյակային ծրագրի 48.5%-ը և 7.5%-ով գերազանցել նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 6.3 մլրդ դրամ տրամադրվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով եռամսյակային ծրագրի 69.4%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից շուրջ 5.1 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 1.2 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: Պետական պարտքի սպասարկման ծախսերը 18.3%-ով գերազանցել են նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ պայմանավորված ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճով:

Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 3.7 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 67.7%-ը և 54.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

12.2 մլրդ դրամ են կազմել պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները, որից 11.9 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 272 մլն դրամը՝ միջազգային կազմակերպություններին: Մասնավորապես՝ համայնքների բյուջեներին տրամադրվել են 5.4 մլրդ դրամի դոտացիաներ, որոնք նախորդ տարվա նույն

ժամանակահատվածի համեմատ գրեթե չեն փոփոխվել: Դրամաշնորհների եռամսյակային ծրագիրն ընդհանուր առմամբ կատարվել է 54.4%-ով, իսկ նախորդ տարվա հունվար-փետրվար ամիսների համեմատ նշված ծախսերն աճել են 17.3%-ով:

Ընթացիկ ծախսերի 39.2%-ը՝ 44.2 մլրդ դրամ, ուղղվել է սոցիալական նպաստների և կենսաթոշակների վճարմանը՝ ապահովելով ներկայացված բոլոր պարտավորությունների կատարումը և արձանագրելով առաջին եռամսյակի ծրագրի 60.1% կատարողական: Մասնավորապես՝ նշված գումարից 32.3 մլրդ դրամ են կազմել կենսաթոշակները, 11.8 մլրդ դրամ՝ նպաստները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նպաստների և կենսաթոշակների ծախսերն ավելացել են 14.5%-ով կամ 5.6 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի միջոցներից 18.8 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ կազմելով եռամսյակային ծրագրի 51.8%-ը և 1.8%-ով զիջելով նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները հունվար-փետրվար ամիսներին կազմել են 2.8 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 27%-ը: Մասնավորապես՝ 2.9 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, որոնց եռամսյակային ծրագիրը կատարվել է 27%-ով: 123.6 մլն դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ կազմելով եռամսյակային ծրագրի 28%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշը նվազել է 61.3%-ով՝ հիմնականում պայմանավորված շենքերի և շինությունների վրա կատարված ծախսերի նվազմամբ:

<u>ՀՀ պետական բյուջեի հավելուրդը</u>

2012 թվականի հունվար-փետրվար ամիսներին ՀՀ պետական բյուջեն կատարվել է 3.8 մլրդ դրամ հավելուրդով՝ առաջին եռամսյակի ծրագրով նախատեսված 27.3 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Մասնավորապես՝ ներքին ֆինանսավորումը կազմել է -15.2 մլրդ դրամ, արտաքին ֆինանսավորումը՝ 11.4 մլրդ դրամ: Բյուջեի հավելուրդը հիմնականում պայմանավորված է ազատ միջոցների 14.4 մլրդ դրամով ավելացմամբ՝ 38.1 մլրդ դրամով օգտագործման փոխարեն:

Ներքին աղբյուրներում -1.86 մլրդ դրամ են կազմել փոխառու զուտ միջոցները, -13.4 մլրդ դրամ՝ ֆինանսական զուտ ակտիվները: Մասնավորապես՝ 1.85 մլրդ դրամ է կազմել

գանձապետական պարտատոմսերի զուտ մարումը: Մուրհակների մարման նպատակով առաջին եռամսյակի ծրագրով նախատեսված վճարումները կատարվել են 95.5%-ով՝ կազմելով 11.3 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 285.8 մլն դրամի վարկեր: Շուրջ 1.3 մլրդ դրամ ստացվել է տրամադրված ներքին վարկերի վերադարձից: 2012 թվականի հունվար-փետրվար ամիսներին պետական բյուջեի ազատ միջոցներն ավելացել են 14.4 մլրդ դրամ՝ նախատեսված 38.1 մլրդ դրամի օգտագործման փոխարեն:

Անցած ժամանակահատվածում պետական բյուջեի արտաքին ֆինանսավորումը կազմել է 11.4 մլրդ դրամ, որից 18.5 մլրդ դրամը՝ փոխառու միջոցների, -7.1 մլրդ դրամը՝ ֆինանսական ակտիվների գծով: Եվրահանձնաժողովի կողմից Մակրոֆինանսական աջակցության ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել են ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված վարկային միջոցները՝ 20.1 մլրդ դրամի չափով: 1.6 մլրդ դրամ ուղղվել է արտաքին պարտավորությունների մարմանը, որից 667.8 մլն դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 126.3 մլն դրամ՝ ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի նկատմամբ ունեցած պարտքի մարմանը, 219.8 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 622.7 մլն դրամ է տրամադրվել Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը:

Շուրջ 6.6 մլրդ դրամ տրամադրվել է ԼՂՀ-ին որպես միջպետական վարկ, որը կազմել է եռամսյակային ծրագրով նախատեսվածի 66.6%-ը և 3.1%-ով գերազանցել նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Վրաստանի կողմից միջպետական վարկի գծով առաջին եռամսյակում նախատեսված գումարն ամբողջությամբ վճարվել է՝ կազմելով 79.9 մլն դրամ: Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերմանն ուղղվել է 355.6 մլն դրամ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 52.9%-ը: Հաշվետու ժամանակահատվածում 199 մլն դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված արտաբյուջետային դրամաշնորհային միջոցների մնացորդը: